# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/2-1

ք.Երևան «04» «11» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Ա. Ղազարյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, (այսուհետ «Պատվիրատու»), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Ավետիսյանի, (այսուհետ «Կապալառու») մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 08.07.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Կապալառու կազմակերպության՝ «Բիդեք» ՍՊԸ-ի, 03.11.2020թ.-ի (մուտք N 8668) գրությունը, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 1.3 կետով և շինարարական աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների (չափաբաժին թիվ 3) կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Բիդեք» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Երևան, Սասունցի Դավթի փող., 87ա շենք |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011029445 | Հ/Հ 1570015559920100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00450801 |
| ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան | Տնօրեն՝ Գ.Ավետիսյան |
| ---------------- (ստորագրություն) Կ.Տ | ---------------- /ստորագրություն/ Կ.Տ |

«ԲԻԴԵՔ» "БИДЕК" "BEDECK" 00450801